**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 03.07.2019թ.
ժ. 11[00]

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ.Կարապետյան(ԳԱՊ),

ՀՀ ՀՈՒ ՍՎ ֆիզիկական պատրաստության և սպորտի բաժնի ֆիզիկական բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Դավթյան (բացակայում է)

ՀՀ ՀՈՒ ՍՎ Ֆիզիկական պատրաստության բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Սաղաթելյան

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան:

**Գնումների համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցներով գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Սահակյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

---

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:***

**1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացի «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸի և Ա/Ձ Աննա Սահակյանի կողմից ներկայացրած փաստաթղթերի, որոնցում առկա է անհամապատասխանություններ, մասնավորապես՝
«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸի կողմից ներկայացրած փաստաթղթերում (հավելված 6.1)
**1-ին, 2-րդ, 9-րդ, 19-րդ չափաբաժիններում** նշված են «կամ համարժեք» բառերը, անհրաժեշտ է հստակեցնել ֆիրմաները:
Ա/Ձ Աննա Սահակյանի կողմից ներկայացրած փաստաթղթերում (հավելված 6.1) նշված է «կամ համարժեք» բառերը, անհրաժեշտ է հստակեցնել ֆիրման:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 04.07.2019թ. հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է

նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում վերոնշված մասնակիցները շտկե են անհամապատասխանությունները և գնահատվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 Շարունակելով աշխատանքները 09.07.2019թ. և հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից 1-ի, 2-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ 18-րդ, 19-րդ, 21-րդ և 24-րդ չափաբաժիններում ***«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ***-ին: 4-րդ չափաբաժնում ***Աննա Սահակյան Ա/Ձ***-ին, 3-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 20-րդ, չափաբաժիններում ***«Սպորտ Սիթի»*** ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնում ***«ԴԵՍԻ»*** ՍՊԸ-ին, 7-րդ, չափաբաժնում ***«Երվանդա»*** ՍՊԸ-ին, 16-րդ, 17-րդ չափաբաժիններում ճանաչվեց ***«Ասողիկ»*** ՍՊԸ-ին, 22-րդ և 23-րդ, չափաբաժիններում ***«ՍԱՔԻ»*** ՍՊԸ-ին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Վ. Սահակյան)

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/10»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

(ԳԱՊ) Գնահատող Հ. Կարապետյան

Գնահատող Ա. Սաղաթելյան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնումների համակարգող՝ Վ. Սահակյան